№ 43 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 25 ՓԵՏՐՈՒԱՐԻ

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 25 ՓԵՏՐՈՒԱՐԻ № 43

Հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Сололакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57. Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐՈՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատում փոփոխութիւններ չկան։

Կովկասեան ճակատում ռուսները շարունակում են հետապնդել Թիւրքերին Մամախաթունից, խլելով դարձեալ մի թնդանօթ։

Պարսկաստանում ռուսները գրաւել են Քիրմանշահից դէպի արևմուտք 40 վերստի վրայ գտնուած լեռնանցքը։

Դարդանէլի Թիւրք զօրքերի և ծանր արտիլերիայի մի խոշոր մասը շտապով ուղարկւում է Կովկասեան ճակատը։

Դրութիւնը Պոլսում խիստ կրիտիքական է, Դաւադրութիւն է բացւած գերմանացիների դէմ և դաշնակիցների օգտին։ Էնվէր-փաշան ծանր կերպով վիրաւորւած է։

Վերդենի մօտ դրութիւնը փոխել է. կռիւն անցել է Մաաս գետի ձախ ափն եւ։ Գերմանացիներին աջողել է գրաւել Ֆորժ գիւղը և «265» բարձունքը։ Դրութիւնը, սակայն, երկիւղ չի ազդում։

ԷՐԶՐՈՒՄԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Գ. Ց. Խունունց, որ Քաղ. Միութեան կողմից Էրզրում էր գնացել երկու ուրիշ գործիչների հետ, նոր վերադառնալով, հետևեալ տեղեկութիւնները հաղորդեց ի միջի այլոց՝ մի ժողովի մէջ։

Հայ բնակիչներ մնում են 80-100 հոգի, ըստ ոմանց մօտ 130։ Թիւրքերը մօտ 25,000, կուչ եկած իրենց տներում, գրեթէ փողոց չեն դուրս գալիս։ Քաղաքի մէջ անտանելի աղտոտութիւն կայ։ Գ. Խունունց հարց ու փորձ է արել մի քանի վկաների—հայ և օտար։ Նա հանդիպել է Թիւրքերի ճանկից ազատւած մի հայ սպայի, որ պատմել է իրեն, ի միջի այլոց հետևեալը.

Թիւրքերի տրամադրութիւնը, որ պատերազմի սկզբում, համեմատաբար լաւ էր, մէկէն ի մէկ փոխւեց Սարիղամիշի պարտութիւնից յետոյ։ Պարտութեան պատճառները վերագրեցին հայերին։ Ինչու... Սրան էլ չի կարող բացատրել։

Այնուհետև սկսում են զատել թիւրք զօրքի հայ զինւորներին, իբրև վտանգաւոր տարր, հեռացնում են սահմանից, ծառայեցնում ճամբաներում, որպէս սոսկ բանւորներ։

Միևնոյն ժամանակ քաղաքի մէջ գլուխ է բարձրացնում պրովոկացիան ու տերրորը։ Սպանում են տեղւոյն ականաւոր հայերից Բաստրմաջեանին։ Կախում են կամ աքսորում աչքի ընկնող երիտասարդներին։ Ստիպում են մի խումբ պատւաւոր հայ քաղաքացիների՝ անձամբ գնալ ու քանդել գերեզմանոցում 1829 ին ռուս նահատակ զինւորների յիշատակին կառուցւած արձանը։ Ստիպում են նաև հայերին՝ իրենց հաշւով բանալ լազարէթ։ Ապրիլի 5-ին Պոլսից ստացւած հրահանգի վրայ՝ մեծ միտինգ է տեղի ունենում քաղաքից դուրս և այստեղ արդէն հօջաները բացարձակապէս քարոզում են ջարդ, հայերին պատճառ բռնելով վերահաս աղէտների։ Հայկական բոլոր դիմումները անցնում են ապարդիւն։ Վալին փոքր ինչ լաւ էր տրամադրւած դէպի հայերը, բայց Պոլսի հրահանգները կաշկանդում են նրան։

Յունիսի 4-ին սկսւում է տեղահանութիւնը ամբողջ վիլայէթում։ Հրամանը կատարւում է փութով, անակնկալի առաջ դնելով հայ ազգաբնակութիւնը։ Ոստիկանները գիշերով թափւում են հայ գիւղերը, դուրս հանում մարդկանց տներից, զատում կանանց ու երեխաներին և բռնութեամբ քշում հեռուն։ Աւելի մեղմ է եղել—նուազ դաժան—տեղահանութիւնը բուն Էրզրումից։ Այդտեղ վալին տալիս է 15 օր ժամանակ գաղթելու համար։

Սակայն, որովհետև գաղթողներին յանձնում են սրիկայական խմբերի, աւազակաբարոյ Թիւրք չէտաների՝ ճանապարհին գաղթականների բազմութիւնը հետզհետէ հալւում, քչանում է և և, սպայի ասելով, շատ քչերն են ողջ հասնում իրենց վերջնական կայանը, Քեմախի շրջանը։ Տեղի են ունենում աննկարագրելի բարբարոսութիւններ։

Սպայի ասելով, տեղահանութիւնը նոյն պատկերն է ունեցել բոլոր միւս հայաբնակ վիլայէթներում։ Էրզրումում չեն խնայել անգամ այն մի շարք հայ վարժուհիներին—բողոքական, կաթոլիկ—որոնք եղել են օտարահպատակ և պաշտօնավարել են օտար կոլլեժներում։

Մնացել էին մօտ 15 տուն հայ արհեստաւորներ, որ պէտք են եղել թիւրքերին պատերազմի ընթացքում։ Փախուստի միջոցին նրանց էլ կոտորել են։

Ոչ պակաս զարհուրելի և նողկալի են չարաչարութիւնները ուրիշ տեսակ ումների՝ որոնք կարծէք եկել են լրացնելու թիւրքերի աւերածը...

Աւելի մանրամասն պատմութիւնը Կարնոյ ողբերգութեան կը տանք թերթիս յաջորդ թւերով։

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

III

Ես միայն հայ մատենագրութիւնը չեմ մեղադրում։ Մեղաւոր է մեր ամբողջ իրականութիւնը։ Հայ երիտասարդութիւնը մի կողմից պետական դպրոցի միջոցով առաջնորդւում է դէպի օտարացում, միւս կողմից մատնւում է տգիտութեան հայ դպրոցի մէջ։ Պարզ ու որոշակի ձևակերպած կէտ նպատակի չունենք մենք մեր ազգային դաստիարակութեան մէջ։ Մինչև այժմ հայ դպրոցը դեռ չէ իւրացրել թէ ինչն է կազմելու նրա սրբութիւն սրբոցը։ Հայագիտութիւնը ամէն գիտութիւնից քիչ է զարգանում հայ դպրոցի մէջ։ Թող ինձ չասեն թէ այնտեղ հայերէն են սովորեցնում, ես արդէն ասել եմ որ լեզուն բաւական չէ։ Նարեկացուն, Կոմիտասին, Շնորհալուն հասկանալու համար հարկաւոր է փոխել մեր վերաբերմունքը, այլ սիստեմ և աշխարհայեացք մշակել։ Հայոց պատմութիւնը, հայոց գրականութեան պատմութիւնը երկրորդական, արհամարհւած առարկաներ են։ Երբեք չպիտի դադարէ ամօթալի լինելուց այն փաստը, որ մեր միջնակարգ դպրոցներից մէկում (Նուքու Թեմ. դպրոց) մի քանի տարի առաջ ամբողջ մանկավարժական ժողովը հաւաքւեց և... պակասեցրեց հայոց պատմութեան դասերի թիւը։ Ինչ էք հրամայում որ լինի սրանից յետոյ...

Ասած է՝ վարդ չի բուսնի այնտեղ, ուր փուշ է ցանւած։ Մենք գիտմամբ յեղաթիւրում ենք մեզ, սպանում ենք մեր արժանիքները, ոտնակոխ ենք անում մեր ստացած սիրուն ժառանգութիւնները։ Որտեղ պիտի պատրաստւի մի լաւատեղեակ, գիտութեամբ ամրապնդւած սերունդ, լցւած աշխատելու յօժարութեամբ։ Վերցրէք էջմիածնի ճեմարանը, մի կատարելապէս դժբախտ հիմնարկութիւն։ Թող մէկը հաշւի թէ միայն այս վերջին 10 տարւայ ընթացքում քանի տեսակ առարկաներ են մտցւած նրա մէջ մի կամ ամենաշատը 2—3 տարի ժամանակով։ Հաւատացած եմ, որ կը ստացւի այն տպաւորութիւնը թէ գուցէ եղել են և չինարէնը մտցնելու մասին մտածողներ, իսկ հայագիտութեան մասին ոչ որ չէ մտածել։ 40—50 տարւայ մէջ չկարողացանք ունենալ մի հաստատուն կուռ, որի վրայ հայ ազգի կուլտուրան և գրականութիւնը յարատև ծեծէին և նրանց հարցերը մշակէին եռանդով ու ուսումնասիրութիւնների պտուղներ տային։ Արդիւնքը։ Մենք մեզ չենք ճանաչում—սա մի ընդհանուր ճիչ է, օտարները ինչպէս պիտի ճանաչեն։

Սա փաստ է, անժխտելի փաստ, որ օտարները մեզ պիտի ճանաչեն մեր միջոցով։ Եթէ մենք այսօր պատրաստ ենք արտասուք թափել մի զոյգ համակրական խօսք լսելիս և չգիտենք ինչպէս շնորհակալ լինենք, պատճառը նոյնն է—մենք անտակի թոյլ ու խեղճ ենք մեզ ճանաչելու մէջ։

Մեր ձեռքին է մեր բախտը։ Եւ ամէն ինչ ամենից առաջ կախւած է մեր աշխատանքից։

Խոշոր օրինակն այսօր կանգնած է մեր առջև։

Բրիւսովից առաջ հայոց գրականութեան մասին հիացմունքով խօսել են Անատոլ Ֆրանս, Ջէյմս Բրայս, Պոլ Ադան, Գաբրիէլ Մուրէյ։ Բայց դրանցից ոչ ոք հայերէն չգիտէր։ Ինչպէս էին կարողանում նրանք ոգևորւել հայ հանճարով և վեր հանել հայկական ոգին։ Շատ պարզ է պատասխանը.—Նրանց առջև դրած էր Արշակ Չօպանեանի մեծ գործը։

Հայ մարտիրոսագրութեան ամենադաժան շրջաններից մէկում, 1895-ի ջարդերին, այդ Թիւրքահայ մտաւորականը Պարիզում, մեն-մենակ, առանց նոյն իսկ ապրուստի միջոցների, եռանդուն աշխատանք էր թափում մի հսկայական, աներևակայելի դժւար մարտի համար։ Անտարբեր էր ֆրանսիական հասարակութիւնը, նրա արտաքին քաղաքականութեան ղեկը գտնւում էր Թիւրքամոլ Հանոտոյի ձեռքում։ Պէտք էր կռւել այդ անտարբեր, անգամ թշնամական վերաբերմունքի դէմ։ Հայերն ունէին բարեկամներ ֆրանսիացիների մէջ և նրանց օգնութեամբ աշխատում էին քաղաքական շրջաններում հայանպաստ հոսանք ստեղծել։ Արշակ Չօպանեանը աշխատում էր այդպիսի հոսանք առաջացնել հասարակական կարծիքի մէջ։ Լինելով գրչի մարդ, նա, ի հարկէ, պիտի ընտրէր գրչի աշխարհը։ Յաջորդեցին մի շարք ֆրանսերէն հրատարակութիւններ։ Լոյս ընծայեց Ադամի՝ Զէյթունի ապստամբութեան պատմութիւնը, հրատարակեց հայկական կոտորածների մանրամասնութիւնները պատմող մի երկար շարք վաւերագրեր։ Սրանով, ի հարկէ, բան չէր դառնայ։ Այդպիսի հրատարակութիւններ շատ էին լինում, մանաւանդ անգլիերէն լեզւով և Չօպանեանը աւելի ազդու միջոցի դիմեց.—մտածեց ներկայացնել այդ ջարդւող ժողովուրդն իբրև կուլտուրական-քաղաքակրթական մի երևոյթ, տալով այդ ազգի գրականութիւնը, խօսելով նրա ստեղծագործական հանճարի, նրա ճակատագրի ու կոչման մասին*)։

Եւ միմեանց ետևից դուրս եկան Չօպանեանի ազնւացուցիչ աշխատասիրութեան կոթողները։ Թարգմանեց նա հայոց բազմաթիւ ժողովրդական երգեր («Chants Populaires Arméeniens»), Թարգմանեց հայ գուսանների կամ միջնադարեան երգիչների (թւով 18) գլուխ գործոցները («Les Trouvires Arméniens»), Թարգմանեց և հայկական քերթւածներ, հին ու նոր, որոնց մէջ առաջին անգամ եւրոպացու աչքին հանդէս էր գալիս Նարեկացին իր «Ձայն հառաչանաց հեծութիւն սրտի» վսեմ հոգեկան զեղումով։ Տւեց, վերջապէս, մի տեսութիւն հայ անցեալի վրայ «(L'Arménie, son Histoire, sa Littérature»), կուռ ուսումնասիրական թափով տոգորւած մի աշխատութիւն, որի մէջ թարգմանական նմուշներ էր տալիս Շնորհալուց և յատկապէս գեղեցիկ նրա «Matin de lumière, soleil de justice» (Առաւօտ լուսոյ, արեգակն արդար) օրհներգը։

Թիւրքահայ տաղանդաւոր գրողի լեզւական հմտութիւնը, ընդարձակ լաւատեղեկութիւնը, տոկուն ու յամառ աշխատանքը և անշէջ սէրը դէպի առարկան արել են այն, ինչ կարող էին անել—հաղորդել են ամբողջ գործին մի բարձր արժանիք, մի անզուգական հեղինակաւորութիւն։

Ահա մեր հայրենակցի այդ գործերն են խօսել տւել օտարներին, հաղորդելով ոչ միայն առատ, ճաշակով ընտրւած նիւթ, այլ և ղեկավարող ցուցմունքներ։ Բրիւսովն էլ մեծ չափերով օգտւել է Չօպանեանից և ես համոզւած եմ որ նրա գեղեցիկ թարգմանութիւնների մեծ մասը ֆրանսերէնից է։ Եւ եթէ վաղը մի ուրիշ օտարազգի կամենայ մտնել հայի սրտին ու զգացմունքին, նա էլ պիտի գնայ նախ և առաջ որոնելու Չօպանեանին։

Լէօ

*) Օգտւում ենք ներկայ առիթից՝ յիշեցնելու—և պ. Լէօն ինքն էլ, անշուշտ, չի մոռանում—որ նոյն հայկական պրօպագանդի աշխատանքը (գլխաւորապէս քաղաքական իմաստով) վերջին տասնամեակներում կատարել են նաև ուրիշ հայ դէմքեր ու հաստատութիւններ Եւրոպայում։ Բրօշիւրներ և գրքեր լոյս են տեսել—ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն լեզուներով—Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան, «Դրօշակի» ու «Հնչակի» տպարաններից, Ակնունիի, Ահարոնեանի, Նազարբէկի, Լորիս-Մելիքեանի և այլոց ջանքերով։ Յիշենք նաև տաղանդաւոր ու ազդեցիկ Տիգրան Երկաթին, որ ունեցաւ, 90-ական թւականների սկզբում, կարճատև, բայց փայլուն գործունէութիւն։ Անմոռանալի են նրա շեղ տեսութիւնները ֆրանսերէն լեզւով հայոց նորագոյն ու տենդենցիոզ գրականութեան մասին (Նալբանդեան, Րաֆֆի, Պատկանեան և այլն)։ Նրանցից առաջ աշխատել են նոյն համակրանքի հոսանքն առաջացնել Եւրոպայի հասարակական կարծիքի մէջ՝ Մինաս Չերազ, Բրուսալի, Սերվանցի, իրենց անգլիերէն և ֆրանսերէն ամսաթերթերով («L'Arménie» և «Hayastan»), ուր քաղաքական պրօպագանդ մղելով հանդերձ՝ ձգտել են (սկսած 80-ական թւականների վերջերից) ծանօթացնելու եւրոպացիներին նաև հայ գրականութեան, պատմութեան և կուլտուրայի հետ։
Նրանցից առաջ, 70-ական թւականներում, Աբգար Յովհաննիսեանն էր հիմնել իր «Armenische Bibliothek»-ը Գերմանիայում։ Վերջապէս, նոյն աշխատանքը կատարել են Մխիթարեան հայրերը և ամենից առաջ ինքը հայոց նահապետը, Հայր Ալիշան, իր իտալերէն, ֆրանսերէն հրատարակութիւններով։ Եղել են և ուրիշները, որոնց այժմ չենք մտաբերում։ Սակայն անուրանալի է և այն՝ որ իբրև սոսկ անհատ իր սահմանափակ միջոցներով Ա. Չօպանեանն աւելի է արտադրել, քան որևէ ուրիշը՝ իր տոկուն, յամառ աշխատանքով, իր մի շարք ֆրանսերէն հրատարակութիւններով,—և շատ աւելին կարտադրէր քառորդ դարու ընթացքում, եթէ վաղուց չընդհատւէր քաղաքական հրապարակախօսութեան ասպարէզը, որ իրենը չէր։ Խմբ.

ԿԵԱՆՔԻ ԳԻԾԵՐ

I

Օժանդակութիւնը

Անգլիայէն եկող բարեկամիս խընդրանքով քանի մը փախստական ընտանիքներուն այցելութեան կերթանք։ Բարեկամս իրեն տրամադրութեան տակ ունի համեստ գումար մը, զոր պիտի բաշխէ այն ընտանիքներուն՝ որոնք խեղճ ըլլալով մէկտեղ՝ չեն կարող դիմումներ կատարել պաշտօնական մարմիններու քով փշրանք մը ստանալու համար։

Կը մտնենք տուն մը։

Գետնայարկ սենեակի մը մէջ, տեղաւորւած են երեք ընտանիք, բոլորն ալ բազմանդամ, որոնցմէ հինգը հիւանդ ու միայն մէկ վերմակի տակ ծրարւած։ Անուններ տալու պէտք չեմ զգար, որովհետև առանց այն ալ փախստական պաշտօնական ընտանիքներու համեստութիւնը շատ վիրաւորւեցաւ այս քանի մը ամիսներու ընթացքին։ Գիտէին մեր այցելութեան նպատակը. բոլորը լուռ են։ Դուրս կելլենք. կը հրաւիրենք ընտանիքին մայրերը, որ մեզի հետևին, ու ամենքի աչքէն հեռու՝ Անգլիայէն եկող բարեկամս երեք ընտանիքի մայրերուն առանձնապէս կը նուիրէ համեստ գումարներ, որպէս զի հիւանդներուն համար պէտք եղած դիւրութիւնները ընծայւին։

Արցունքի կայլակները կողողեն երեք մայրերուն ցամաքած երեսները, կուլան, որովհետև օժանդակութեան [illegible] և բնական ձևէն ետք՝ անյոյս չպիտի նստին և իրենց փոքրիկները հացի կարօտը չպիտի քաշեն տասնեակ մը օրերու համար։

Դուրս կելլենք։ Լոնդոնաբնակ բարեկամս շատ խռւած կը յայտնէ, որ Անգլիոյ մէջ օժանդակութիւն հասցնողները ամենէն առաջ կաշխատին չվիրաւորել նպաստընկալներու արժանապատւութիւնը. իսկ մեր մէջ...

II

Ինքնազրկում

Վանեցի ինտելիգենտ օրիորդի մը կը հանդիպինք. տիկին կորսնցուցած է իր ծնողները և բոլոր ազգականները, մեռած է նաև իր սիրելի քոյրը—երբեմնի շէն ու փարթամ նահապետական օճախի մը մայրը՝ թողնելով երեք որբեր։ Երևանի Բարեգործական ընկերութեան որբանոցի կառավարչուհի որ. Աւետեան կառաջարկէ վանեցի օրիորդին որբերն իր խնամքին յանձնել, սակայն կը մերժէ։ Վանեցի մանկահասակ օրիորդը չի հանդուրժեր, որ իր կենդանութեան իր սիրասուն քրոջ որդիները որբ նկատուին և որբանոցներու մէջ գտնւին, այլ ինք զինք կենթարկէ անօրինակ ինքնազրկումի մը—գիշեր-ցերեկ մէկ ընելով կը կարէ, կը ձևէ, որպէս զի իր քրոջ որդիները որբ չըլլան, որպէս զի իր քրոջ յիշատակը չխաթարւի։

Արևմտեան ազգերու պատմութեան մէջ դժւար թէ կարելի ըլլայ հանդիպիլ նման տիպերու. ինչքան հպարտ պէտք է ըլլայ մեր ցեղը նման գերազանց առաքինութիւններով օժտւած ըլլալուն համար։ Լոնդոնաբնակ բարեկամս հիացած այս գեղեցիկ օրինակով մեծապէս քաջալերեց վանեցի արժանաւոր օրիորդը և խոստացաւ երբեք չմոռնալ զինք...

Հ. Բագրունի

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 25 փետրուարի

ՑԱՆՔԵՐԻ ՏԱՐԱԾՈՒԹԵԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ

Փետրուարի 18-ին Պետական Դումայում աշխատաւորականների նախաձեռնութեամբ շօշափուել է մի շատ լուրջ հարց։ Այս խմբակի ներկայացուցիչ Ջիւբրինսկին ցոյց է տալիս, որ 1915 թւին Ռուսաստանում ցանքերը կրճատուել են 15%-ով։ Զանազան տեղերում այդ կրճատումը հասնում է մինչև 40%-ի։ Նրա ասելով, ներկայ տարում, եթէ ձեռք չառնւեն եռանդուն միջոցներ, ցանքերը աւելի ևս պիտի փոքրանան։

Կոմս Կապնիստը, երկրագործութեան մինիստր Նաումովը հանգստացուցիչ ճառեր ասացին, բայց ոչ ոք չժխտեց ցանքերի կրճատման փաստը։ Մինիստրը և միւսները այս երևոյթը բացատրում են աշխատող ձեռքերի պակասութեամբ։ Այս պակասը յոյս ունին մասամբ լրացնելու գերիների և «դեղին» աշխատանքով, այսինքն չինացի մշակների միջոցով։

Մի շարք ուրիշ միջոցներ էլ են առաջարկում այս վտանգաւոր երևոյթի դէմ կռւելու համար։ Պէտք է վերականգնել ճանապարհների հաղորդակցութեան կանոնաւորութիւնը։ Անհրաժեշտ է վաղօրօք ապահովել գիւղացիներին երկրագործական մեքենաներով և գործիքներով, որոնք կարող են աշխատող ձեռքերի պակասը լրացնել։ Դատապարտելի է յայտարարում գիւղերում մնացածների վրայ կողմնակի պարտականութիւններ դնելը, անասունների և տեղափոխութեան այլ միջոցների ռեկվիզիցիան և այլն։

Եթէ Ռուսաստանում անհանգստանում են ցանքերի կրճատման և աշխատաւոր ձեռքերի նւազման պատճառով, ապա ինչ պէտք է ասել Անդրկովկասի, մանաւանդ Հայաստանի ցանքերի մասին։

Ռուսաստանում շատ քիչ շրջաններ կան, որոնք դրսի հացի կարիք են զգում։ Ամենաքիչ ռուս գիւղացիները և կալւածատէրերը հաց են վաճառում նորմալ պայմաններում։ Ներկայ պատերազմական հանգամանքներում շատ-շատ պիտի դժւարանայ հացի վաճառումը։ Գիւղացիք կը կրճատեն ցանքերը երևի այդ աւելցուկի սահմաններում։ Բացի դրանից, Ռուսաստանում հաղորդակցութեան միջոցները (երկաթուղի, ծովային, գետային նաւարկութիւն, խճուղիներ և հասարակ սայլի ճանապարհներ) անհամեմատ աւելի են, քան Կովկասում։

Իսկ մեզանում։ Դառն է մեր օրը... Դեռ պատերազմից առաջ էլ, հացահատիկների աշխարհ Հայաստանը, գործադրելով հանդերձ իր բոլոր աշխատող ձեռքերը, որոշ հանգամանքների շնորհիւ կարիք էր զգում ռուսական հացի ներմուծման։ Հայ շինականը հերկում էր ամբողջութեամբ հողի այն փոքրիկ տարածութիւնը, որը նրան բաժին էր ընկել անփոփոխ, առանց անելու ամբողջ մէկ դարի ընթացքում։ Եւ նա դարձեալ կարիք էր զգում դրսի հացի։

Ինչ պիտի լինի մեր ժողովրդի դրութիւնը, եթէ նա չկարողանայ ամբողջութեամբ ցանել իր տրամադրութեան տակ եղած փոքրիկ դաշտը։ Մենք չունինք ստոյգ տեղեկութիւններ, թէ որքան են կրճատւել ցանքերը մեր գաւառներում։ Չենք ասում չունինք, ադմինիստրացիան էլ անհրաժեշտ չի համարում իր տեղեկութիւնները հաղորդել հասարակութեանը։ Բայց կասկածից դուրս է, որ ցանքի տարածութիւնը մեզանում էլ զգալի չափով պիտի կրճատուած լինի և օրըստօրէ դրութիւնը պիտի վատթարանայ։

Մեր ճանապարհները... յայտնի են. մէկ երկաթուղային գիծ և մի քանի գաւառական կենտրոնները միմեանց հետ կապող խճուղիներ։ Բազմաթիւ են մեզնում կտրւած, կղզիացած շրջանները, որոնք նոյն իսկ նորմալ պայմաններում, դժւարութեամբ են ներմուծում հաց և այլ կենսական մթերքներ։

Այս պատճառով, Դումայում յարուցած հարցը, իր մանրամասներով հանդերձ կենսական նշանակութիւն է ստանում յատկապէս մեզ համար։ Այն ցուցմունքները, որ անում են Դումայի ամբիոնից կառավարութեանը, գերազանցապէս մեր ադմինիստրացիային է վերաբերում։ Առաջարկում են կառավարութեանը հասցնել գործիքներ և մեքենաներ։ Դա ամենից առաջ վերաբերում է հենց այն երկիրներին, ուր ցանքերի կրճատումը առաջ է բերում ոչ թէ արտահանուող, այլ սպառուող հացի կրճատում։ Այդպէս են հայկական շատ և շատ գաւառները։

Պահանջել, որ գիւղերում մնացածներին չկաշկանդեն զանազան պարտաւորական աշխատանքներով, կը նշանակէ հենց աչքի առաջ ունենալ մեր գաւառները, ուր 60 տարեկան ծերունիներն անգամ գործի են դրւած. . . . .
Առաջարկել, որ օգտւեն գերիների աշխատանքից, — կը նշանակէ պահանջել, որ մեզնում դէթ պարտաւորական պետական աշխատանքների համար օգտւեն Անդրկովկասի միմիայն այն բնակչութիւնից, որը զինւորական ծառայութիւնից ազատ է մնացել։ Էլ չենք ասում, որ մեծ նշանակութիւն ունի մեզ համար Պետական Դումա մտցրած այն առաջարկը, որով զինւորական ծառայութեան պիտի կանչւեն այդ արտօնեալ տարրերը։

Բայց մենք մեծ փորձառութիւն ունինք... Մենք չենք կարող սպասել, որ այդ բոլորը արւի առանց մեր միջամտութեան։ Հայ հասարակութիւնը ինքը պիտի նախաձեռնութիւն վերցնի իր վրայ։ Հայ Գիւղատնտեսական ընկերութիւնը պարտաւոր է նման դիմումներով դուրս գալ կառավարութեան առաջ և բացատրել իրերի դրութիւնը։ Դրա համար անհրաժեշտ է, որ հասարակութիւնը ունենայ փաստեր։ Մեր գաւառական թղթակիցները պէտք է օր առաջ հասցնեն մեզ տեղեկութիւններ մեր գաւառներում աշխատող ձեռքերի պակասութեան մասին։ Պիտի ասւեն, թէ 1915 թւին տեղի ունեցե՞լ է, արդեօք, ցանքերի կրճատում. որտեղ, ինչ չափով և ինչ տեսակի ցանքերի։ Այս թւերը, թէկուզ և մօտաւոր, փաստական նկարագրութիւնների հետ միասին, հիմք պիտի ծառայեն Գիւղատնտեսական ընկերութեան դիմումներին։ Որանք հիմք կը դառնան և մեր հասարակութեան մասնաւոր գործունէութեանը։ Հասարակութիւնը, նրա կազմակերպութիւնները, համախմբւած դարձեալ Գիւղատնտեսական ընկերութեան շուրջը՝ պիտի ձեռնարկեն օգնութեան գործը։ Պէտք է հասցնել աշխատող ձեռքեր փոխարինող մեքենաներ, պէտք է կազմակերպել վարուցանքին աջակցող կամաւոր խմբեր ուսանողներից, ուսուցիչներից, բարձր դասարանների աշակերտներից, քաղաքների ազատ անգործ երիտասարդներից, ինչպէս արւեց մի քանի տեղերում պատերազմի սկզբին։ Հասարակութիւնը, հայ երիտասարդութիւնը պիտի լաւ իմանայ, որ այժմ դրութիւնը հայ գիւղում աւելի ծանր է. օգնութեան կարիքը աւելի տեական է, քան թէ պատերազմի սկզբին։

Առաջին հերթին, ի հարկէ, պէտք է մտածել Թիւրքահայաստանում գրաւած երկիրներում այս տարւայ ցանքը ապահովելու մասին։ Այդ խնդրում, բացի փախստականներից և ամբողջ հայ ազգից, առանձնապէս շահագրգռւած է Անդրկովկասի հայ գիւղացիութիւնը, որը այսօր ստիպւած է այս կամ այն ձևով կերակրել իր աղէտեալ հայրենակիցներին։

Այնուհետև մեր հասարակութեան ուշադրութիւնը պիտի կենտրոնանայ մեր գաւառների երկրագործութեան ծանր պայմանների վրայ։

Գարունը եկաւ։ Էլ երկար մտածելու և «ուսումնասիրելու» ժամանակ չկայ։

Ահա հասել է մեր ապահով, հարուստ տարրերի ամենամեծ […]ութեան ժամը։

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԼԽ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

20 փետրուարի

Արևմտեան ճակատ.—Թշնամու արտիլերիան եռանդ կերպով կրակում էր Դւինսկ կղզու հարաւարևելեան շրջանի դէմ, որի ժամանակ հինգ օդապարիկ ղեկավարում էին կրակը։ Դւինսկի դիրքի վրայ Իլլուկստի մօտ շարունակւում է ռմբային և ականային եռանդ կռիւը փոսերի համար։

Կովկասեան ճակատ.— Մեր զօրամասերը շարունակում են հետապնդել թիւրքերին Մալաթիայից, խլելով դարձեալ մի թնդանօթ։

Պարսկաստանում մենք գրաւեցինք Քիրմանշահի արևմտեան կողմը 40 վերստի վրայ գտնւած լեռնանցքը։

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 23 փետր.— Պոլսից ստացւած հաւաստի տեղեկութիւնների համաձայն՝ Դարդանէլից վերցրած թիւրքական զօրքերի և ծանր արտիլերիայի մի խոշոր մասը շտապով ուղարկւում է դէպի Կովկասեան ճակատը ռուսների յառաջխաղացումը կասեցնելու համար։

Պոլիս հասած բուլղարական մի քանի զօրամասեր տեղաւորւած են Ոսկեղջիւրի զօրանոցներում։ Մի քանի ժամանակ առաջ քաղաք մտած գերմանական և աւստրո-հունգարական զօրքերին յանձնւած է Պերայի և եւրոպական թաղի պահպանութիւնը՝ թիւրք ամբոխի հնարաւոր ոտնձգութեան և բռնութիւնների կոտորածի առաջն առնելու համար։ Այդ նպատակով Ղալաթան Ստամբուլի հետ միացնող շարժական մեծ կամուրջը գիշերւայ ընթացքում վերցւած է պահւում։ Այս միջոցով ուզում են թոյլ չտալ, որ խլած ամբոխը կամ ըմբոստացած զինւորներն անցնեն եւրոպական թաղը և թալանեն ու կոտորեն բնակիչներին։ Գերմանական, աւստրիական և բուլղարական զօրքերը բաց չեն թողնում զօրանոցներից և պատրաստ են ամեն տեսակ անակնկալների։ Ամբողջ գիշերւայ ընթացքում մայրաքաղաքը թաղւում է մթութեան մէջ, վախենալով ռուսաց հիդրոպլանների երևումից։

Լուր է պտտւում, դեռ ևս չստուգւած, որ Էնւէր-փաշան վիրաւորւած է Կովկասեան ճակատում չերքէզ-կամաւորների ձեռքով, որոնք մեծ մասամբ նրա ոխերիմ թշնամիներն են և նրան են համարում նախկին զինւորական մինիստր Նազըմ-փաշայի սպանողը։

Ռուս զօրքերի յառաջ խաղացումը Անատոլիայում յարուցանում է ուժեղ յուզում և մտքերի խլրտում, որն երևան է եկել մանաւանդ գահաժառանգ պրինց Իւսուֆ-Իզէդդինի սպանութիւնից յետոյ։ Ժողովուրդը տրտնջում է և ասում, որ միայն դաշնակիցների մուտքը Պոլիս կարող է իրեն ազատել սովից և աղքատութիւնից։

Ըստ լուրերի տարաձայնութիւններ են ծագել մեծ վեզիրի և Թալէաթ-բէյի միջև ներքին և արտաքին խնդիրների վերաբերմամբ։ Հաւաստացւում են, որ Թալէաթ-բէյը մօտիկ ապագայում մեծ վեզիր կը դառնայ։

ԱԹԷՆՔ, 22 փետր.—Հաղորդում են, Պոլսի գերմանական շրջաններում յամառօրէն պտտւող լուրերի համաձայն, որ Էնւէր-փաշան ծանր կերպով վիրաւորւած է դաւադիրների ձեռքով։

Մեկլենբուրգեան հերցոգը հեռագրել է Վիլհելմ կայսրին, որ թիւրքերը կարօտ են օգնական զօրքերի։

Սրւազում պայթել է վառօդի պահեստը, որից մեծ հրդեհ է առաջացել։

ԱԹԷՆՔ, 21 փետր.—Պոլսից ստացւած տեղեկութիւնների համաձայն, դրութիւնն այնտեղ խիստ կրիտիքական է։ Հանդուցեալ գահաժառանգի բարեկամ 22 թիւրք սպաներ կախւած են։

Էնւէր-փաշայի կեանքի դէմ եղած մահափորձի լուրը հաստատւում է։ Նա ծանր կերպով վիրաւորւած է և սերասքերիաթից փոխադրւած է զինւորական հիւանդանոց։

Զմիւռնիայից ստացւած տեղեկութիւնների համաձայն, քաղաքում յաճախ տեղի են ունենում թիւրք զօրքերի խռովութիւնները զգացւած կարիքի և դեղորայքի պակասութեան պատճառով, որով օրական տեղապահ զօրքի մէջ 20-ից մինչև 30 մահւան դէպքեր են պատահում։ Լուրերի համաձայն դասալքութիւն է բացւած գերմանացիների դէմ և դաշնակիցների օգտին։

ԱԹԷՆՔ, 23 փետր.—«Ակրոպոլիս» լրագիրը, որ հակառակ է Վենիզելոսի կուսակցութեանը, վերստին խօսելով Էրզրումի առման և Տրապիզոնի ու Բաղդադի անխուսափելի անկման մասին, ասում է. «Ռուսաստանի կողմից Թիւրքիային հասցրած հարւածը կը սթափեցնի նրան և կը ցրի նրա գեղեցիկ երազը Գալլիպոլի մասին»։

ԱԹԷՆՔ, 22 փետր.— Դեռ ևս չըստուգւած լուրերի համաձայն, Թրակիայում և Բուլղարիայում գտնւող թիւրքական բանակը ռուսների Փոքր Ասիայում առաջանալու հետևանքով հրաման է ստացել մեկնել Անգորա և Կոնիա։ Գերմանո-թիւրքական կոնտինգենտները ռազմական դիրքեր են բռնած Գալլիպոլի թերակղզում, նկատի ունենալով, որ դաշնակիցները կարող են անակնկալ կերպով զօրքեր ափ հանել։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱԲԵՄ

ՊԱՐԻԶ, 23 փետր.— Ցերեկւայ հաղորդագրութիւն։ Արգոններում թշնամու արած մի քանի փորձերը՝ Օտչեւոլէի մօտ գտնւող ականային փոսերը գրաւելու համար, յետ են մղւած։ Մեր արտիլերիան շարունակում էր ռմբակոծել թշնամու հաղորդակցութեան ճանապարհները։ Մաաս գետից դէպի արևմուտք գերմանացիներն ուժեղ արտիլերիայի կրակի պաշտպանութեան տակ, կենտրոնանում էին առաջանալով Թրենւիլի շրջակայքի երկաթուղագծի երկարութեամբ։ Միաժամանակ գերմանական մի դիւիզիայի կատաղի և ուժեղ գրոհը «265» բարձունքի վրայ, հնարաւորութիւն տւեց գերմանացիներին գրաւել այդ՝ չնայած նրան հասցւած մեծ կորուստներին մեր արտիլերիայի և գնդացիրների կրակով։ Մենք գրաւում ենք Բեոանգուր գիւղը, Կորբո անտառից դէպի արևելք գտնւած անտառակն ու Դիւլուա բարձունքը։ Գիշերւայ ընթացքում շարունակւում էր եռանդուն թնդանօթաձգութիւն Ռեշիից (Մաաս գետի վրայ) դէպի արևելք, Օգրեմոն անտառի շրջանում, նոյնպէս Վեօվրում՝ Ֆերնի հատւածում և Մաասի բարձունքների մօտ գտնւած գիւղերում։

ՊԱՐԻԶ, 23 փետր.— Հաւասի գործակալութիւնը հաղորդում է. Մի քանի օրից ի վեր Վերդենի անփոփոխ մնացած դրութիւնը փոխւեց։ Այսօր կռիւը ծաւալւեց և Մաասի ձախ ափի վրայ։ Բեթանկուրի և Մաասի միջև գերմանացիները յաջողեցան գրաւել Ֆորժ գիւղը և այդ կերպով առաջացան 100—150 մետր. սակայն այդ առաջխաղացութիւնը նրանց չտւեց էական առաւելութիւններ, քանի որ մենք առաջւայ նման ամրապէս գրաւում ենք իշխող դիրք Դիւլուայի բարձունքների վրայ։ Ընդհանրապէս, Ֆորժի մօտ կռիւը չէ կարող ազդեցութիւն ունենալ Վերդենի ճակատամարտի ելքի վրայ, որի յետագայ զարգացմանը պէտք է սպասել լիակատար հանգստութեամբ։ Շամպանիում գերմանացիներն ապարդիւն յարձակում գործեցին՝ մեր զօրքերին լարւած դրութեան մէջ պահելու նպատակով, որպէսզի այդ ճակատից օգնական ոյժեր չըղրկենք։

ԼՈՆԴՈՆ, 22 փետր.—Վերդենի այցելող լորդ Նորթ'կլիֆը «Թայմսում» հրատարակեց Վերդենի կռւի նկարագրութիւնը։ Նրա ասելով, ֆրանսիացիների կորուստները չնչին են, մինչ ստուգապէս յայտնի է, որ գերմանական 3-րդ և 18-րդ զօրաբանակները բոլորովին ոչնչացւած են, պահեստի 7-րդ զօրաբանակը կորցրել է իր կազմի կէսը և 16-րդը՝ իր կազմի երեք քառորդը։ Փետր. 19-ի երեկոյեան ոչնչացւեց նոյնպէս պահեստի 5-րդ զօրաբանակից 113-րդ դիւիզիայի և բաւարական պահեստի դիւիզիայի մի մասը։ Գերի են վերցւած գերմանական կայսրութեան զանազան մասերի բնիկներից։ Նրանցից մէկը հաղորդում է, որ փետր.-ի 8-ին նրա գումարտակում գտնւում էին 209 հոգի և 4 սպայ, իսկ փետր. 9-ին մնացել էին միայն 70 հոգի մի սպայով։ Բոլոր գերիները գերմանական կորուստները գնահատում են ոչ պակաս, քան բոլոր մասնակցող ոյժերի մի երրորդը։ Կարելի է անվախ հաւաստիացնել, որ գերմանացիների կորուստները պակաս չեն 100,000 հոգուց։ Վերջում Նորթկլիֆն ասում է. «Անկարելի է ասել, թէ ինչքան կը տևէ Վերդենի կռիւը։ Սակայն գերմանական զօրքերի հոգին այնպէս չէ, որ նրանց աջողւի դուրս հանել ֆրանսիացիներին իրենց ամրացւած դիրքերից»։

ԾՈՎԻ ՎՐԱՅ

ԼՈՆԴՈՆ, 22 փետր.—Լլօյդին հաղորդում են Սանտոսից, որ սպանիական «Պրինցիպ-դէ-Աստուրիաս» շոգենաւը երեկ առաւօտ խութի զարնւեց Բոյ հրւանդանից 3 մղոն դէպի արևելք՝ Սան-Սեբաստիանայի մօտ և ընկղմւեց 5 րոպէում. նաւաստիներից 86 հոգի և 57 ուղևորներ ափ են հանւած Սանտոսում ֆրանսիական «Վեգա» շոգենաւով. պակասում են 338 ուղևորներ և նաւաստիներից 107 հոգի։ Պատահարի վայրում է գտնւում «Պրինցիպ-դէ-Սատրուստեգնի» շոգենաւը։ Խորտակւած շոգենաւը Բուէնոս-Այրէսից գնում էր Բարսելոնա։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԿՈՊԵՆՀԱԳԵՆ, 22 փետր.—«Ֆոսսիշէ Ցայտունգ»-ին հաղորդում են Լիսսաբոնից, որ այնտեղ սպասւում է դիւանագիտական յարաբերութիւնների խզում Գերմանիայի հետ։ Գերմանական հպատակները իրենց դրամները հանում են բանկերից. գերմանական շատ ընտանիքներ արդէն հեռացել են Պորտուգալիայից։

ԱԹԷՆՔ, 22 փետր. — Գերմանիան պաշտօնապէս հաղորդեց յունական կառավարութեան, որ գերմանական սուզանաւերի կողմից կընկղմւեն յունական զինւած առևտրական նաւերը՝ առանց նախազգուշացման։

ԱԹԷՆՔ, 21 փետր. — Յունական և գերմանական կառավարութեան միջև բանակցութիւնները՝ Աւստրիայի և Գերմանիայի հետ հեռագրական ու հեռախօսային հաղորդակցութիւն հաստատելու համար, վերջանալու մօտ են։

ՀՈՊԵՆՀԱԳԵՆ, 23 փետր. — «Պոլիտիկէն» թերթին հեռագրում են Ռոտերդամից, որ բելգիական սահմանից ստացւած տեղեկութիւնների համաձայն, այնտեղից անցել են գերմանական 4 երկար գնացք՝ բարձւած գերմանական ծանր արտիլերիայով։ Գնացքները Վերդենից ուղարկւում էին Աախէն և Կիօլն։ Անդադար թարմ գնդեր են ուղարկւում դէպի արևմուտք բաղկացած երիտասարդ զինւորներից։ Վերջին օրերում Անտուերպէնը լցւած է զինւորներով։ Սահմանի պաշտպանութեան համար կանչւում են ծերունիներն ու ինւալիդները։ Վերջին օրերում շատ գերմանացի դասալիքներ անցան հոլլանդական սահմանը։

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 23 փետր.— Վերջերս Բուլղարիայից եկած ճանապարհորդները պատմում են, որ բուլղար ինտելլիգենցիայի մեծ մասը յոյս չունի այլևս Գերմանիայի վերջնական յաղթանակի մասին և մեծ երկիւղ է յայտնում Բուլղարիայի ապագայի մասին։ Ցրւում է այն միտքը, որ անխելքութիւն կը լինի մտածել նոր գրաւման մասին, քանի որ բուլղարները վստահ չեն, որ կը մնան հին Բուլղարիայում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

† ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Էրզրումի պատերի տակ ընկել է երիտասարդ բանաստեղծ Իսահակ Իսահակեանը—մեր յայտնի բանաստեղծ Աւետիք Իսահակեանի եղբօրորդին։

Նոր էր բոլորել 23 տարին։ Նիհար ու վտիտ մարմնի մէջ ունէր ցեղուն, բանաստեղծական հոգի, որը նոր-նոր զարթնել էր՝ երևան բերելով սիրոյ ջերմ շողեր, սրտի թրթիռ դէպի այն բոլորը, ինչ որ կեանքին կը պատկանէր...Անողոք և վաղաժամ մահը սակայն պատկեց իր սէրը լռութեան պսակով և նոր թև առած ջահէլ սիրտը դադարեց այլևս բաբախելուց...

Իսահակ Իսահակեանը դեռ «անուն» չունէր մեր գրականութեան մէջ։ Հազիւ մի երկու քննադատներ, նկատելով երիտասարդի բանաստեղծական նուրբ հոգին, քննադատական մի շարք տողեր նւիրել էին երիտասարդ բանաստեղծի գործերին, որոնցից մէկը—«Հեքիաթ Արևի տակ» առանձնապէս իր վրայ էր գրաւել քննադատութեան ուշադրութիւնը։

Յիշեալ գիրքը, որ բաղկանում է մի շարք փոքրածաւալ էջերից՝ լի է խանդավառ ու խնկայեղ սիրով դէպի կեանքը, դէպի այն ամենը՝ ինչ կայ «Արևի տակ»—դէպի Աղջիկն ու Գեղեցկութիւնը։ Զգայուն ու ջերմ տողեր են նւիրւած կեանքին, որը բանաստեղծի աչքում մի «Հեքիաթ է Արևի տակ»։

Կարելի է ասել կորցրինք մի երկրորդ Դուրեան, որի երիտասարդ կեանքը սակայն տարաւ ոչ թոքախտը, այլ այն զարհուրելի Մոլոխը, որի անունն է պատերազմ։

Հանգուցեալ ջահէլ բանաստեղծը բացի յիշած մեծ ուշադրութեան արժանի գործից, հայ զանազան պարբերական հրատարակութիւնների մէջ՝ առանձնապէս գաւառական մամուլի էջերում ունի բազմաթիւ ոտանաւորներ, որոնք նոյնպէս տոգորւած են միևնոյն վառ սիրով դէպի կեանքը, շատ քիչ դէպքերում ի յայտ բերելով պեսսիմիզմի թեթևակի գըծեր։

«Հեքեաթ...ը» նա գրել է 18 տարեկան հասակում, երբ դեռ նոր էր ելել աշակերտական նստարանի վրայից։ Այս պարագան ոչ միայն մատնանշում է իր կորուած ապագան, այլև կարծել է տալիս, թէ անհնարին չէ, որ երիտասարդ բանաստեղծը թողած լինի ուրիշ կարևոր գործեր ևս, որոնք ծնողների և կամ ազգականների մօտ են գտնւում ներկայումս։ Մեզ յայտնեցին, որ հանգուցեալը կարգադրել է «զարկւելու» դէպքում այրել իր ձեռագիրները, սակայն ծնողները որոշել են չկատարել այդ յուսահատ կարգադրութիւնը։

Ի վերջոյ, նկատենք, որ հանգուցեալը ծնւել է Ալէքսանդրապոլի գաւառի Ղազարապատ գիւղում, որտեղ և անցրել է իր մանկութեան շրջանը։ Ապա սովորելով Ալէքսանդրապոլի առևտրական դպրոցում և աւարտելով վերջինս՝ կանչւում է զինւորական ծառայութեան և ուղարկւում զինւորական դպրոց, որն աւարտում է յաջող և ստանում սպայի կոչում։

Ասում են, որ կռւում էր քաջ և արհամարհում էր մահը, որը, սակայն, չարհամարհեց իրեն և յաւիտենական լռութեան պսակ դրեց բանաստեղծական ճակտին...

Ս. Նազանեան

Ալէք-պոլ

ԻՍԱՀԱԿ ԻՍԱՀԱԿԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր սիրելի ընկերոջ և ազնիւ երիտասարդ Իսահակի մահը, մեզ անհուն վիշտ պատճառեց. սակայն մենք մխիթարւում ենք մեզ այն մեծ յուսով, որ Իսահակի և նրա նման հարիւր հազարաւոր զոհերի արեան մէջ է ծլելու և ծաղկելու հայրենիքի վաղւայ ազատութիւնը։

Ա. Աւագեան, Ա. Թափչեան

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Էրզրումի գրաւման առթիւ Թիֆլիսի մոլոկանները իրենց ներկայացուցիչների անունով մի շնորհաւորական հեռագիր են ուղարկել Կովկասի Փոխարքային, որից ստացել են հետևեալ պատասխան հեռագիրը.

«Սրտանց շնորհակալ եմ մոլոկաններից նրանց աղօթքների համար. Նրանց ամենահպատակօրէն զգացմունքները կ'արկանեմ առ ոտս Նորին Կայսերական Մեծութեան։ Գեներալ-ադիւտանտ

ՆԻԿՈԼԱՅ»

◆ Ամերիկայի Հայկական կոմիտէն Մեսրոպ եպիսկոպոսի անունով ուղարկել է 110 հակ զգեստ գաղթականների համար. 23 հակ շորեր են ուղարկւած նաև Օդեսսայի հայ կանանց կողմից։

◆ Երեկ, քաղ. վարչութեան նիստում քննւեց Թիֆլիսի տրամւայի 1916 թ. ելքի և մուտքի հաշիւը. Նախահաշիւը կազմում է 2 միլ. 56,000 ռուբ., իսկ ելքը՝ 1 միլ. 634,000 ռ.։

◆ Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութեան լիազօր Օթարեանը, Ալաշկերտի Ղարաքիլիսէից հեռագրում է, որ այդ շրջանի գիւղերում տեղաւորւած են 600 գաղթականներ, որոնց 90% կանայք և երեխաներ են. Մուշից և Խնուսից նոր փախստականներ են գալիս։ Օթարեանը շուտափոյթ օգնութիւն է խնդրում. փախստականները սուր կարիք են զգում տաք շորերի և բժշկական օգնութեան։ Լիազօրը անյապաղ խնդրում է 3000 ռ. ցորեն գնելու համար, որը Խնուսում շատ առատ է։

◆ Փետրուարի 22-ին և 23-ին, Սարիղամիշից և Ալէքսանդրապոլից եկան №№ 5 և 208 սանիտարական գնացքները 11 վիրաւոր և հիւանդ զինւորներով, որոնց թւում կային 2 վիրաւոր

և հիւանդ սպաներ ու 62 զրահակիր զինւորներ. բոլոր ծանր հիւանդները և վիրաւորները թողնւած են Նախիջևանի զինւորական հիւանդանոցի անօրէնութեանը, իսկ թեթևները փոխադրւած են Բագու և «Կաւկազ» կայարանի Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի անւան նւիրւած № 116/16 սանիտարական գնացքը, որ մինչև այժմ բանում էր արևմտեան ճակատում, բերւած է Կովկասեան ռազմաբեմ.

✦ Փետրւարի 23-ին Նաւթլուղ կայարան հասաւ Պետրոգրադից ուղարկւած մի ախտահանական խումբ, որի գլուխն է կանգնած Խարկովի համալսարանի պրիւատ-դոցենտ Շիրոկարովը. Խումբը Կովկաս է եկել 8 մարդատար և 21 ապրանքատար վագոններով, որոնք ուղարկւեցին Սարիղամիշ, որտեղից խումբը աւտոմոբիլներով կը մեկնի Էրզրում և աւելի հեռուներ.

✦ Քաղաքային բժշկա-սանիտարական յանձնաժողովի նախագահ բժիշկ Գ. Գ. Ալիբէկովը դիմել է քաղաքապետութեանը և խնդրել, որ վերջինս յայտարարի Թիֆլիսի բոլոր կաթնավաճառներին և կաթից կենսամթերքներ պատրաստողներին, որ նրանք պաշտօնեան վկայականներ ձեռք բերել առևտուրը շարունակելու համար, ուրիշ ըստ դումայի վճռած պարտադիր որոշումների, ոչ ոք իրաւունք չունի կաթնատու անասուններ և արջառներ պահել և առևտուր անել. դրանից դատ հարկաւոր է ունենալ վկայական անխարդախ կաթ պատրաստելու մասին բժշկա-սանիտարական վերահսկողութեան համար.

✦ Կովկասեան շրջանի գործարանային ժողովը արտօնել է Ալաւէրդու պղնձահանքին, որ վերջինս 30,000 փութ արջասպ պատրաստի տեղական այգետէրերի համար.

✦ Երկուշաբթի, փետրւարի 22-ին, Կովկասեան գիւղատնտեսական ինսպեկտոր Ս. Ն. Տիմոֆէևի նախագահութեամբ տեղի ունեցաւ ագրոնոմային միջական յանձնաժողովի նիստը, որի մէջ քննւեց Թիֆլիսի Գիւղատնտեսական լաբորատորիայի ծրագիրը և առաջիկայ տարւայ նախահաշիւը, որը որոշւեց մինչև 71,000 ռ.

✦ Փետրւարի 23-ին գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշևի կարգադրութեան համաձայն, Փոթիից մարշրուտ գնացքով ուղարկւեց 21 վագոն ալիւր, որից 5 վագոն դրկւելու է Բորչալուի գաւառ և մնացեալները էջմիածնի գաղթականների համար.

✦ Գեներալ Թամամշևի պատւէրի համաձայն, Նպաստամատոյց ընկերութիւնը պատրաստել է 46 հազ. հագուստ (մօտ 2 վագոն), որը շուտով ուղարկւելու է Երևանի նահանգը փախստականներին բաժանելու համար.

✦ Ինչպէս յայտնի է, թատրոնական տոմսակների վրայ բաւական բարձր գնով զինւորական տուրք է նշանակւած, որի պատճառով ազգաբնակչութեան աղքատ մասը անկարող է թատրոն յաճախել. այդ ի նկատի ունենալով, իրաւասու Ս. Ա. Գալստեանի առաջարկութիւնը (զինւորական տուրքը պակասեցնելու մասին) քաղ. վարչութեան կողմից դումա է մտցւում.

✦ Թիֆլիս է եկել բժշկական խորհրդի պրոֆեսոր Մ. Ե. Կապուստինը.

✦ Մօտ ապագայում տեղի կունենայ Կովկասի քաղաքների գործիչների համագումարը. քննւելիք առարկան լինելու է կենսամթերքների հարցը.

✦ Քաղաքային առևտրական-տնտեսական մասի գործակալները մի առևտրական խանութից երևան են հանել 340 փութ գետնախնձոր. այդ առևտրականի մասին հաղորդւած է իշխանութեան.

✦ Նախանցեալ օրը Բագու մեկնեց Թիֆլիսում գործող հայոց թատրոնական ընկերակցութեան խումբը Աբէլեանի և Սիրանոյշի գլխաւորութեամբ. Խումբը Բագւում կը մնայ երեք շաբաթ և ապա կը շրջի զանազան քաղաքներ. Ռեպերտուարը կազմւած է բացառապէս ինքնուրոյն պիէսներից.

✦ Ստացանք հետևեալ հրատարակութիւնները. 1) «Նազէի օրօրը» (Մի պատկեր «Արցունքի հովիտից»), երաժշտութիւն Դ. Ղազարեանի. զուտ արդիւնքի կէսը նւիրւում է օր. Օհանջանեանի անւան «Մեղու» ընկ. հիմնած գրադարանին. 2) «Русское Общество Пароходства и Торговли».

✦ Փետր. 24-ին Թիֆլիսի բարակներն են մտել սկարլատինայով—2, դիֆտերիտով—2, առողջացել են սկարլատինայից—2, բծաւոր տիֆից—3, մնում են սկարլատինայով—117, դիֆտերիտով—22, ծաղիկով—1, բծ. տիֆով—22, որով. տիֆով—13, մենինգիտով—2.

✦ Փետր. 23-ին Թիֆլիս է ներմուծւել՝ ալիւր—46 վ., շաքար—25 վ., գարի—1 վ., վառելափայտ—1 վ., մազութ—19 վ.

ԿՈՎԿԱՍ

Բորժոմից հաղորդում են, որ այնտեղ կամաց-կամաց պակասում են կենսամթերքները և որքան քչանում են վերջինները, այնքան բարձրանում են գները. այսպէս օրինակ, մսի ֆունտը ծախւում է 30 կոպէկով.

✦ Նուխիի շրջաններում 10 տարուց ի վեր գործող աւազակային խումբը, որի գլուխը կանգնած են եղել Իւսուբ և Աբդուլ-Սալամ անունով աւազակապետները, ոստիկանութեան կողմից ցրւել է տրւած. սպանւած են վերյիշեալ պարագլուխները, իսկ մնացեալները փախուստ են դիմել.

✦ Փոթիից գրում են, որ այնտեղից եռանդուն կերպով շաքար է ուղարկւում Թիֆլիսի և Քութայիսի նահանգները և Կովկասի այն քաղաքները, ուր որ շաքարի մեծ կարիք է զգացւում.

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՂՐՂԻ (Ղազախի գաւ.)—«Հորիզոնի» № 28-ում Ներին Կարմիր-Աղբիւրից գրւած է Բերդ գիւղի մանր վարկի ընկերութեան գործունէութեան և հաշւետւութեան մասին. յօդւածից երևում է, որ իբր այդ ընկ. Շամշադինում միակն է և բոլոր Շամշադինի 17 հայ գիւղերը միայն այդ ընկերութիւնից են օգտւում. այն ինչ Շամշ. կայ երկու մանր վարկի ընկ. Բերդ և Ղուլալի գիւղերում, և շրջակայ տասնեակ վերստերով հեռաւորութեան վրայ գտնւող գիւղերը զրկւած են մնում դրանց օգնութիւնից. Այդ երկու գիւղերի մանր վարկի ընկերութիւնները չեն կարողանում և չեն էլ կարող բաւարարութիւն տալ Շամշ. ազգաբնակչութեան պահանջներին. Հնարաւոր եղածին չափ ցանկալի է նման ընկերութիւններ բանալ հետևեալ բազմամարդ գիւղերում. Թաթլու, Թովուզ, Մովսէս, Ղրղի, Բաշքենդ և Ճամբարակ. Այդ դէպքում գուցէ Շամշադինը ազատւած լինի նամակագրի ակնարկած վաշխառուների ճանկերից.
Կես-Եսաեան

ՀԱՄԱՄԼՈՒ.—Մեծ-Ղարաքիլիսայի արևմտեան կողմը 20 վերստ հեռաւորութեան վրայ կը գտնւի Համամլու գիւղը, ուր տեղաւորւած են Գուլանըրի կենտրոնն եղող Կոփէն և շրջակայ մի քանի գիւղերէն փախուստ տւած 366 շունչ գաղթականներ. Ասոնց օգնականը կը հոգայ «Եղբ. Օգնութեան Կոմիտէն» տալով անձի համար ամսական 4½ ռուբլի իբր նպաստ. Պէտք է ասել, որ գաղթականները ժամանակին կը ստանան իրենց նպաստը և եթէ կը լինի մէկ երկու օրւայ ուշացում այն ալ պատճառը կենտրոնէն դրամի ուշ հասնելն է. Գաղթական երեխաների դաստիարակութեան գործը իր վրայ է վերցրած Կ. Հ. Բ. ընկերութիւնը. մօտ երկու ամիս է, որ տեղական դպրոցի սենեակներէն մէկուն մէջ կը սովորին 64-ի չափ երկսեռ աշակերտներ մի գաղթական ուսուցչով. Գիւղին մէջ տարածւած է բկացաւը և ծաղիկը. մի քանի օր է ինչ եկած է մի բժիշկ, որ սկսած է դեղը տալ և եղածին չափ կաշխատի տարածւող հիւանդութեանց առաջն առնել.

— Տեղիս տանուտէր պ. Աբէլ Շահպազեանցի և մի քանիների կողմէ նախապէս որոշւեցաւ գիւղին մէջ սպառողական խանութ մը բանալ, այդ առթիւ հաւաքեցին 700 ռուբլու չափ գումար մը, բայց թէ այդ գումարը քանի բարձրացաւ և թէ երբ պիտի սկսի խանութի բացումը, առ այժմ յայտնի չէ.
Գալբաքեան

ԷՋՄԻԱԾԻՆ.—Օր աւուր բծաւոր տիֆը տարածւում է մեր շրջանում. Անցեալներում հաղորդել էի, որ միմիայն Վաղարշապատում գոյութիւն ունի երեք հիւանդանոց բծաւոր տիֆի համար (երկուսը հասակաւորների, իսկ մէկը մանկահասակների համար). Երկու օրս Քաղաքների Միութեան էջմիածնի բաժանմունքը էջմիածնի գաւառի Օշական և Սամաղար գիւղերում բացել է բծաւոր տիֆի հիւանդանոցներ, 30-ական մահճակալներով. Բծաւոր տիֆով մահացողների թիւը, որ առաջ 6% տոկոս էր, այժմ զգալի չափով բարձրացել է.

— Մոսկւայի Հայկ. կոմիտէն Սարդարաբադ գիւղում բացել է գաղթականների համար երթևեկ հիւանդների հիւանդանոց.

— Տեղիս որբանոցում վերջին օրերս բծաւոր տիֆով հիւանդացել են մի քոյր և մի ծառայ.
Ա—ցի

ՍՈՒՆԴՈՒԽԼՈՒ (Ալեք. գաւ.).—Գիւղումս իւրաքանչիւր օր փողոցներում թաւալւում են 2-3 օղիով հարբածներ. Օղին բերւում է մերձ գիւղերից. Օղին գնւում է գիւղումս մի քանի պարոնների ձեռքով. Չնայած, որ վերջիններիս կտրուկ կերպով հրամայւած է օղու վաճառումը և մօտակայ Ղարաքիլիսա գիւղում տանը 15 ռուբլու տուգանքի է ենթարկւած, բայց և այնպէս գործածութիւնը շարունակւում է եռանդուն կերպով.
Վափիկյանեան

ՓԱՌԱԿԱ (Նախիջևանի գաւ.).—Գ. Արշակ Տէր-Սարգսեանը իր հօր՝ Աղաբէգի յիշատակը յաւերժացնելու համար նւիրեց տեղիս եկ. ծխ. «Ղևոնդեան» դպրոցին 125 ռուբլի, աշակերտներին տետրակներ և գրիչներ. Նա նւիրեց նաև մի ոսկեվառ շուրջառ եկեղեցու համար և 5 ռուբլի թուրքերի մէջիտին.
Գէորգ Աճրիկեան

ԱԽԱԼՔԱԼԱՔ.—Ամսոյս 13-ին հայոց դպրոցի դահլիճում տեղիս սիրողների խումբը խաղաց Խ. Աբովեանի «Վէրք Հայաստանի» գրքից փոխադրւած պիէսը «Աղասի Բալասի», յօգուտ նոյն դպրոցի. Մուտք եղել է մօտաւորապէս 200 ռ., զուտ արդիւնք յօգուտ դպրոցի երևի կլինայ մօտ 120 ռ.

— Տեղիս Հայկական կոմիտէն մօտ օրերումս նորից Երևան ուղարկեց հինգ կամաւոր. Ստացել են Կուլիկամ, Սուլդա և Տատէշ գիւղերից տաք զուլպաներ կամաւորների համար.
Լռասու

ԵՐԵՒԱՆ.—Երրորդ թէ չորրորդ ամիսն է Աստաֆեան փողոցի վրայ բացւած է «Մի բաժակ թէյ» մեր հայ կամաւորների օգտին. «Մի բաժակ թէյի» նախաձեռնութիւնը պատկանում է Երևանի Հայ Կանանց կոմիտէին, որը իր սրտին շատ մօտ ընդունելով պատերազմի դաշտում կռւող հայ մարտիկների վիճակը, օգնութիւն է հասցնում ամենաանհրաժեշտ իրերով. Օրիորդները ուրախութեամբ սպասարկում են առաւօտից մինչև երեկոյ. Մեր կարծիքով վատ չէր լինի ստանալ մեր պարբերական հրատարակութիւններից. այդ տեսակէտից շատ աղքատ է «Մի բաժակ թէյի» ընթերցանութեան սեղանը. Մայրաքաղաքի թերթերից ստացւում են միմիայն «Русск. Слово»-ն և կովկասեան թերթերից մի քանիսը.
Գարեգին

ՇԱՒ ԳԻՒՂ (Ղափանի շրջ.)—Մի երկու օր առաջ Ռազդարան թըքարբընակ գիւղի Նարիման բէգը իր եղբօր հետ իրենց գիւղը ցորենի գնացած Շաւ գիւղացի Դաւիթին, առանց որևէ պատճառի բռնում է ու կապում ծառից. լաւ ծեծում, մօտը եղած 29 ռ. փողն էլ վերցնում ու ճամբայ դցում.

Պէտք է ասել, Նարիման բէգը կըռաւ ու պատուհաս է դարձել Շաւ գիւղի գլխին. տէրութեան հետ հողային վէճ ունենալով, անզօր եղաւ այսօր գրական արդիւնքի հասնելու, ուստի վրէժը ուզում է հանել շաւեցիներից, որ շարունակ յօգուտ գանձարանի են աշխատում և նրա շահերը պաշտպանում.

— Շաւ գիւղի դպրոցն այցելեց թեմական տեսուչ Ց. Գէորգեանը, որը մի օր մնալով գիւղում, ստուգեց պարապմունքները և գոհ սրտով հեռացաւ.

— Վատ լուր են գալիս Ղարադաղից. խաների կեղեքումներին չափ չի մնացել, շատ գիւղացի ընտանիքներ անից փախչում և ապաստան են գտնում Ղափանի սահմանին մօտ Հանդ և Սրաշէն գիւղերում.
Դ. Ղազարեան

ԱՐՒԵՍՏ ԵՒ ԳԻՏՈՒԹ.

«ԱՆՈՒՇ»-Ը ՌՈՒՍԵՐԷՆ

Մոսկւայի «Арм. Вѣст.»-ը հաղորդում է, որ այս օրերս գրողների մի շրջանում ռուս բանաստեղծ Վեաչեսլաւ Իւանովը կարդացել է Յով. Թումանեանի «Անուշ» պոէմը իր թարգմանութեամբ. Պոէմը ուժեղ տպաւորութիւն է թողել. Կոմպոզիտոր Գրեչանինովը պատրաստւում է «Անուշ»-ի նիւթի վրայ հայկական օպերա գրել. Նա գնում է Հայաստան հայկական մոտիւներն ուսումնասիրելու համար.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

— Լոնդոնից հաղորդում են. Իտալացիների օդային հետախուզութիւնը պարզել է, որ թիւրք զօրքերը հեռացւած են Պալեստինից և երկաթուղիների կառուցումը այնտեղ դադարեցրած է. Մինչև անգամ Լիւբիայում, եգիպտական սահմանի վրայ, այլ ևս թշնամի չկայ.

— „Бирж. Вѣд.“-ին հաղորդում են, որ Գերմանիան ուլտիմատում է տւել Պորտուգալիային. պահանջւում է 48 ժամւայ ընթացքում արձակել Պորտուգալիայի նաւահանգիստներում գրաււած այն նաւերը, որ գրաւել է կառավարութիւնը.

— Յունաց թագաւորը այս օրերս ընդունել է Վենիզելոսին. Այս բանը նշան է համարւում, որ վերջինս վերստին պիտի անցնի կառավարութեան գլուխը.

— Յունական աղբիւրներից հաղորդւում են, որ գեն. Մակենզենը պիտի գնայ Աթէնք յունաց թագաւորի հետ խորհրդակցելու, որպէս զի ոչնչացնի գեն. Սարրայլի այցի հետևանքները և վերականգնի Գերմանիայի վարկը. Վերջինս այն տարիքն ընկել է Յունաստանում, որ Աթէնքի նոյն իսկ գերմանոֆիլ լրագիրները դաշնակիցների դրութիւնը Սալոնիկում ամրապնդւելուց և Էրզրումի անկումից յետոյ աւելի նւազ յարգական տոնով են խօսում Գերմանիայի մասին.

— Իտալական „Cor. de la Sera“-ն հաղորդում է, որ գեն. Սարրայլի Կոստանդին թագաւորին տւած այցից յետոյ Յունաստանի և Ֆրանսիայի համաձայնութեան միջև աւելի բարեկամական յարաբերութիւններ են հաստատւել. Աթէնքում խօսւում է, որ պարլամենտը կարձակւի և կկազմւի Հունարիսի «փոխանցական կաբինետ», որին կը յաջորդի Վենիզելոսի կաբինետը.

— Աթէնքից հաղորդում են, որ այնտեղ է գնացել սերբիական մինիստր-նախագահ Պաշիչը.

— „Daily News“-ի Աթէնքի թղթակիցը հաղորդում է. Բուլղարներին ամենից աւելի անհանգստացնում է ռուսների աջողութիւնը Փոքր-Ասիայում. Ժողովրդի մէջ աճում են լուրեր, թէ ռուսները կարող են գալ այնտեղից, որտեղից նրանց աւելի քիչ կարելի է սպասել. Ֆերդինանդի Աւստրիա և Գերմանիա մեկնելու առիթը ազգային վերաբերմամբ ունեցած վախն է.

— Պարիզում ստացւած տեղեկութիւնների համաձայն, Սոֆիայի լայն շրջաններում խիստ մտահոգութիւն է պատճառում այն հանգամանքը, որ Ֆերդինանդը երկար ժամանակ մնում է Գերմանիայում. Վախենում են, որ նա կարող է դաշնի համաձայնութիւն կնքել Բուլղարիան առ միշտ Գերմանիայի հետ կապելու համար.

— «Рус. Вѣд.»-ին հաղորդում են Պարիզից. Ասում են, որ Վիլհելմի և Ֆերդինանդի միջև գաղտնի պայմանագիր է կնքւած, որի համաձայն Բուլղարիան, պահպանելով քաղաքական, զինւորական և տնտեսական անկախութիւնը, մտնում է գերմանական ֆեդերացիայի կազմը. Իսկ Գերմանիան պարտաւորւում է պաշտպանել Բուլղարիան նոյն եռանդով, ինչ եռանդով որ կը պաշտպանի գերմանական կայսրութեան բաղկացուցիչ մասերից որևէ մէկը. Բացի սրանից, մտադրութիւն կայ բուլղարական արքայազն Բորիսի համար կազմել «Մեծ Ալբանիա», որի մէջ կը մտնի ի միջի այլոց սերբիական Մակեդոնիայի մի մասը Մոնաստիր քաղաքով.

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Սուխումից Թիֆլիսի Գերապատիւ Սրբազան Առաջնորդին յանձնւած է յօգուտ հայ փախստական որբերի, Սուխումի շրջանում «Լուսաւոր Թերթի» վաճառումից առայժմ գոյացած նւէրները, որի համար շնորհակալութիւնս եմ յայտնում նւիրատուներին՝ ինչպէս և աշխատող անձերին. Մերխեուլ և Դրանդա գիւղերից բար. Վրթանէս քահ. Թորոսեանի միջոցաւ 122 ռ. 25 կ.

Նւիրատուներն են.

Սարգիս Մալխասեան, Իսրայէլ Զոլաքեան, Խաչիկ Օհանեան 3-ական ռ., Կարապետ Աւետեան, Նշան Օհանեան, Բիւզանդ Չէփնեան 2-ական ռ., Նշան Սոմունճեան, Ղազարոս Զոլաքեան, Սարգիս Զոլաքեան, Մելքոն Զոլաքեան, Միսաք Զոլաքեան, Հայկազ Պօղոսեան, Յակոբ Աւետեան, Յարութիւն Խօրասանեան, Պետրոս Դուլաճեան, Արմենակ Բէյհանեան, Մարգար Մարգարեան, Գասպար Տէրտէրեան, Սերովբ Աւետեան, Յարութիւն Օհանեան, Ղազարոս Փալազեան, Խաչիկ Աւետեան, Խաչիկ Գրլճեան, Պետրոս Գալէնճեան, Բաղդասար Մինասեան, Գասպար Զոլաքեան, Մնացական Գալաճեան, Խաչիկ Փալազեան, Յարութիւն Բէյհանեան, Խաչիկ Փալազեան, Սարգիս Դարաքճեան, Արմենակ Զոլաքեան, Գէորգ Սարեան, Բաղդասար Մարգարեան, Գէորգ Արբերեան, Մարտիրոս Յովհաննէսեան, Գասպար Խաճիկեան, Յարութիւն Խաճիկեան, Մելքոն Բէյհանեան, Համբարձում Մալխասեան, Գալուստ Խաչատուրեան, Յարութիւն Տէրտէրեան, Յովակիմ Միկիլեան, Երւանդ Յակոբեան, Ստեփան Վարդեւեան, Սարգիս Ուզլեան, Ներսէս Արզումանեան, Աղամ Բահարեան, Բաղդասար Գանսուզեան, Ներսէս Մուկուչեան, Յակոբ Տէրտէրեան, Բօղոս Խօրասանեան, տ. տ. Մարիամ Տէփիլեան, Սաթենիկ Աւետեան, Խաթունակ Աստուածատուրեան, Յովսէփ Մարգարեան 84 կ., Պետրոս Ներսէսեան 70 կ., Յովսէփ Լուսարարեան, Խաչիկ Թորոսեան, Բաղդասար Գանսուզեան, Պօղոս Խօրասանեան, Ներսէս Լէչկեան 60-ական կ., տիկ. Աննա Խօրասանեան 55 կ., Համբարձում Բահարեան, Գէորգ Մինասեան, օր. Թագուհի Կիւրճեան, Գրիգոր Աստւլեան, Ստեփան Արզումանեան, Սարգիս Լուսարարեան, Պօղոս Շէպէլեան, Յովհաննէս Լուսարարեան, Գրիգոր Առաքելեան, Գասպար Առաքելեան, Գասպար Առաքելեան, Մկրտիչ Աւետեան, Յովհաննէս Աւետեան, օր. Նունուֆար Օհանեան, Արմենակ Խօրասանեան, Վահան Չէփնեան, Յարութիւն Ոսդաշեան, Վարդան Զաքարեան, Աբրահամ Զաքարեան, Յակոբ Յարութիւնեան, Գրիգոր Զաքարեան, Յովհաննէս Եագհճեան, Յովսէփ Աւետեան, Աղամ Մատուրեան, Մինաս Մեղրիկեան, Գրիգոր Յովհաննէսեան, օր. Սրբուհի Կոչեան, Աւետիս Աստւլեան, Մեսրովբ Տէլիպալթեան, Աւետիս Զաքարեան, Ոսկան Աղմաճեան, Զատիկ Ռահանեան, Գրիգոր Ռահանեան, Նահապետ Ռահանեան, Սեդրակ Ռահանեան, Սարգիս Տէլիպալթեան, Միսաք Խօրասանեան, Աղասի Բէյհանեան, Բաղդասար Բահարեան, Սարգիս Բահարեան, Պօղոս Արզումանեան, Աղամ Միրզայէկեան, Գրիգոր Սէխեան, Համբարձում Մուսաջեան, տ. տ. Եւա Խօրասանեան, Համօ Գալաճեան, Համօ Կոնդաքճեան, Խաչիկ Ուզլեան, Աղասի Գալաճեան, Գասպար Մարտիրոսեան, Պօղոս Դաւիթեան, Զատիկ Դաւիթեան, Մելքոն Զոլաքեան, Մարգար Վարդանեան, Մարտիրոս Մինասեան, Աւետիս Տիլէնեան, Սահակ Տարաքճեան, Մկրտիչ Մուսաեան 50-ական կ., Գրիգոր Սէֆէրեան, Յարութիւն Արզումանեան, Պետրոս Կոնդաքճեան, Արմենակ Աւետեան, Սարգիս Ռահանեան, Միսաք Բէյհանեան, Յովակիմ Մարգարեան, Արամ Թորոսեան, Մինաս Ոսդաշեան, Գարեգին Ռահանեան, Մկրտիչ Ռահանեան, Պետրոս Շէբէլեան, Կիրակոս Խօրասանեան, տիկ. Էլմաս Գանսուզեան 40-ական կոպ., Սարգիս Էմիքսուզեան, տիկ. Շուշանիկ Մատուրեան, Էլմաս Զոլաքեան, Թուրէն Գարիկեան, Բաղդասար Մինասեան,

ՀԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՆԱԼՈԳԻԱՆ

I

Խօսելով պատերազմական շրջանում հայ բուրժուազիայի կատարած դերի մասին, պ. Անանունը շօշափում է և անցողակի պատասխան է տալիս մի մեծ հարցի, կարծես, առանց գիտակցելու սրա լրջութիւնը և ընդհանուր բնաւորութիւնը.

Նա զգացումիւն է յայտնում, որ հայ «հետատես» և «քաղաքականապէս հասուն» բուրժուազիան իր ձեռքը «չի հասցրել ազգային գործերի ղեկը», որ նա ձեռնամուխ չի լինում «խորտակելու մանր բուրժուազիայի արկածախնդրական գործունէութիւնը».

Թողնենք այն, որ մեր մարքսիստները երբէք «մանր բուրժուազիային» չեն վերագրում մեծ բուրժուազիայից միանգամայն անկախ գործունէութիւն և որ այդ միտքը նորութիւն և ադանդականութիւն է տեղական մարքսիստների համար. Չը յիշատակենք նաև այն, որ տեղական մարքսիստների «իդէօլոգիայի» և մինչև այժմ գործադրւած միջկուսակցական պայքարի քաղաքականութեան տեսակէտից շատ մեծ ադանդականութիւն է, յայտարարել, թէ «հայ քաղքենիութիւնը», հայ «արկածախնդիրները» բոլորովին կապ չունին հայ բուրժուազիայի հետ... Այս բոլորը թողնենք. Վերցնենք պ. Անանունի եզրակացութիւնը. Անւանելով հայ բուրժուազիային «թուլամորթ», յայտնելով որ չի կարելի որոշել նոյնիսկ, թէ «որ բանակումն է գտնւում կամ որ բանակն է կազմում» բուրժուազիան, նա յանկարծ կոչ է անում նրան. «Ձեռնպահ չպիտի մնայ հայ բուրժուազիան: Թող նա տոգորւի ինքնագործունէութեամբ, թող նա մօտ գայ հայութեան գործերին. Դա է պահանջում թէ նրա դասակարգային օգուտը*) և թէ ողջ ազգի շահը».

Հեղինակը կարծես թէ չի նկատում, որ հայ իրականութեան այս երևոյթը կապ չունի ոչ թուլամորթութեան, ոչ էլ անտարբերութեան հետ, այլ սա մի մեծ սոցիալ-քաղաքական խնդիր է թէ Ռուսաստանի, թէ հայ իրականութեան համար, որը չի կարող լուծւել եւրոպական երկիրների անալոգիայով.

Ի՞նչ է ներկայացնում Ռուսաստանում զանազան հոսանքների ուժերի յարաբերութիւնը.

Միայն շատ միամիտ մարդիկ, որոնց շարքում, ի հարկէ, չի կարող գտնւել պ. Անանունը, կասեն, թէ ձախակողմեան հոսանքը թոյլ է Ռուսաստանում. Ապահովաբար կարելի է պնդել հակառակը՝ որ ձախակողմի ազդեցութիւնը և կապերը ժողովրդի հետ Ռուսաստանում ներկայումս պակաս ուժեղ չէ, քան որևէ այլ եւրոպական երկրում. Ռուս բուրժուազիան եւրոպական իր դասակարգակցի ոյժը և հմայքը ունենալու համար պիտի ունենար նրա անցեալը և նրա ժողովրդական աւանդութիւնները. Այն ազգային ազատագրական գործը, որ նրա ղեկավարութեամբ պիտի կատարէր, շատ ուշացաւ. Մասսան միջամտեց և միջամտում է այդ գործին ոչ իբրև լոկ հետևող բուրժուազիայի, այլ մեծապէս իր առանձին ներկայացուցչութեամբ և իր առանձին լոզունգներով.

Նորագոյն գաղափարները ներս խուժեցին Ռուսաստան և սկսեցին դաստիարակել ժողովրդին և տարրալուծել ինտելիգենցիային այն ժամանակ, երբ բուրժուազիան դեռ չէր ձեռք բերել գերիշխանութիւն. Սկզբից այնպիսի աննորմալ դրութիւն, որ նոյնիսկ լիբերալ-սահմանադրական գաղափարները, որոնք բնականաբար պիտի տարածւէին բուրժուազիայի դրօշակի և ղեկավարութեան տակ, դարձան աւելի ձախ կանգնած տարրերի սեփականութիւն. Հարցրէք մի ռուս գիւղացու կամ բանւորի, թէ ով է իրեն քարոզել ժողովրդական ներկայացուցչութեան, ընդհանուր ընտրական իրաւունքի և քաղաքացիական ազատութիւնների գաղափարները. Նա, ի հարկէ, չի անւանի Միլիւկովին, Մակլակովին, կամ նրանց գաւառացի աշակերտներին, այլ ուրիշ անուններ կը տայ. Բայց չէ՞ որ այս գաղափարները բուրժուազիայի և նրա ինտելիգենցիայի գլխաւոր զէնքերը պիտի լինէին ոյժ և հմայք ձեռք բերելու համար.

Բուրժուազիային զուգահեռ և շատ դէպքերում հակամարտ ոյժերի վաղաժամ (եթէ կարելի է այսպէս անւանել պատմական երևոյթը) երևան գալն է, որ թուլացնում է նրան և յետաձգում նրա քաղաքական գերիշխանութեան օրը. Ռուս բուրժուազիան ստիպւած է միաժամանակ երկու դեր խաղալ. մէկը այն է, ինչ որ խաղաց եւրոպական բուրժուազիան 1789-ին կամ 1848 ին, և մէկն էլ այն, ինչ որ խաղում է ներկայումս. Այս դրութիւնը ծանր է. Ամենուրեք մենք տեսնում ենք, որ ռուս բուրժուազիան յաճախ ստիպւած է զգում իրեն դէմ լինելու այնպիսի ժողովրդական ձգտումների, որոնք միանգամայն պիտի համապատասխանէին իր գաղափարներին. Պարզ է. XX դարում ուշացած պահանջները առաջադրում են գործելակերպի այնպիսի ձևեր, որոնք, ժողովրդի ինքնուրոյն մասնակցութեան դէպքում, անընդունելի են դառնում բուրժուազիայի համար.

Այսպիսով, Նախորդ դասակարգի ոյժը չէ, որ խափանում է ռուս բուրժուազիայի քաղաքական առաջխաղացութիւնը, այլ իր մենակութիւնը, վաղը արթնացած ժողովրդի հանդէպ և աւանդութիւններից, ժողովրդական անհրաժեշտ վարկից զուրկ լինելը.

Ի հարկէ, իր տնտեսական ոյժով և իր Նախորդի հետ բարեկամանալով, ռուս բուրժուազիան վերջ ի վերջոյ կը դառնայ դրութեան տէրը, մասամբ ինքը ներշնչւելով նախորդի գաղափարներով, և մասամբ նրան դաստիարակելով մեր ժամանակների ոգու համաձայն. Բայց դա կը լինի լոկ տեխնիքական յաղթանակ՝ այսօրւայ իշխողների դարաւոր աշխատանքով պատրաստւած ոյժի շնորհիւ. Ռէալ, շահագիտական կախման մէջ դնելով ինտելիգենցիային, բուրժուազիան թերևս ժամանակի ընթացքում որոշ վարկ էլ ձեռք բերի.

Սակայն շատ հեռուների մասին չը խօսենք. Խօսքը վերաբերում է ռուս և հայ բուրժուազիային, այն չափով, որչափով նրանք չունին պաշտօնական պետական ոյժ և պիտի գործեն իրենց գաղափարական, մասամբ նաև նիւթական ոյժով. Եւ մենք տեսանք, որ այդ ոյժերը շատ թոյլ են և անբաւարար մի ժողովուրդ ղեկավարելու և շարժման գլուխը կանգնելու համար.

Այդ երևոյթը, որ ընդհանուր նշանակութիւն ունի Ռուսաստանում, որոշ մոդիֆիկացիայով նկատւում է և հայ իրականութեան մէջ.

Բայց հայ բուրժուազիայի թուլութիւնը ունի և յատուկ հայկական պատճառներ.

Ա. Շահխաթունեան

*) Ընդգծ. ամէն տեղ մերն են. Ա. Շ.

Բաղդասար Գալայճեան, Արիստակէս Ուզլեան, Յովսէփ Մարկոսեան, Խաչիկ Թորոսեան, Յովակիմ Գանսուզեան, Յովսէփ Գալայճեան 35-ական կոպ., Մելքոն Մինասեան, Մարկոս Ասլանեան, Սարգիս Ասլանեան, Պետրոս Թոփալեան, Խաչիկ Առաքելեան, Կարապետ Վարիչեան, Կարապետ Տէրտէրեան, Մկրտիչ Բարսաղեան, Սեդրակ Յովհաննիսեան, Արշակ Զօլաքեան, Գրիգոր Գանսուզեան, Գաբրիէլ Մարգարեան, Արմենակ Ռահանեան, Մելքոն Մելիքեան, Նշան Պըլըչեան, Յակոբ Մարտիրոսեան, Ադամ Արգումանեան, Սարգիս Ուզլեան, Ադամ Գալայճեան, Գասպար Զօլաքեան, Գաբրիէլ Գօճամանեան, Գալուստ Դաւիթեան, Մկրտիչ Մինասեան, Խաչիկ Զատիկեան, Պօղոս Դաւիթեան, Գաբրիէլ Ռահանեան, Մինաս Մարգարեան, Գրիգոր Գանէյեան, տ. տ. Եւա Բէյհանեան, Թուչիկ Տէրտէրեան, Վարդուհի Յովհաննէսեան, Եւա Զօլաքեան, Հայկուհի Սարեան, Ադամ Տիլէնեան, Զատիկ Մալխասեան, Յովսէփ Ռահանեան 30-ական կոպ., Միսակ Պըլըքեան, Երուանդ Էօքսուզեան, Ադամ Գալայճեան, Գալուստ Թոռմաեան, Յակոբ Յովհաննէսեան, Միսակ Ռահանեան, Մկրտիչ Ռահանեան, Յարութիւն Ռահանեան, Երուանդ Ուզլեան, Ադամ Թօփալեան 25-ական կոպ., Մելքոն Ներսէսեան, տիկ. Համաս Գանսուզեան 22-ական կոպ., Ոսկի Ներսէսեան, Մարիամ Բահարեան, Յակոբ Լուսարբեան, Վահրամ Արգումանեան, Յովսէփ Մարտիրոսեան, Յովսէփ Խուչբուլեան, Աւագ Զատիկեան 21-ական կոպ.։ Գումար 122 ռ. 25 կոպ.։ Մինչև այսօր ուղարկած էի 341 ռ. 51 կոպ., այժմս էլ 122 ռ. 25 կոպ., ընդամենը 463 ռ. 76 կ.։

Սուխումի գործակալ՝ Եղիշէ քահ.
Տէր-Եղիազարեան

(Կը շարունակուի)

Երզրումի վիլայէթի Իսպիրան գիւղի բնակիչ Գէորգ Նահապետեանի տեղը գիտցողից խնդրում է յայտնել նրա մասին իր ընտանիքին, որ ապրում է Լոռու շրջանի Ուզունլար գիւղում հետեւեալ հասցէով՝ Аллаверды сел. Узунляръ, бѣженцу Исраелу Геворгянъ.

Հայ Օրիորդների Կոմիտէն ստացաւ Ստեփան Ղազանչեանի միջոցով հանգանակած 107 ռ. 50 կ. տաճկահայ որբերի օգտին։

Նուիրատուներն են.

Աղաբէգի հաշկերոյթում 21 ռ., Հէպիպեան, Ս. Ղազազեան, Լ. Սարգսեան, Ա. Տօնականեան, Գ. Գալեան, Հռ. Տօնականեան, Պապիկեան, Մ. Ալյադեան, Մ. Խանդամեան, Սուքիասեան, Վ. Նարիմանեան, Եղբ. Սուճեան, Գասպարեան 3-ակ. ռ., Ս. Գալեան, Ս. Շէխօեան, Մէյթարճեան, Կ. Արգումանեան 5-ակ. ռ., Յ. Բրուտեան, Իճէրճեան, Մելքումեան, Մէրաքեան 2-ակ. ռ., Ար. Խաչումեան, Մ. Մէհտարճեան, Քոսեան 1 ռ. 50-ակ. կ., Մ. Հէքէքեան, Ֆիդանեան, Խօջայեան, Նադիրեաններ, Սարգսեան, Հէպիպեան, Ք. Շէօեան, Շէխեան, Արգումանեան, Բարաղամեան, Տօնապետեան, Մէյթարճեան, Սաչա, Գասպարեան, Քալաճեան և Օձեան 1-ակ. ռ.։

Բոլոր նուիրատուներին Կոմիտէի վարչութիւնը յայտնում է իր խորին շնորհակալութիւնը։

215 1—1 Վարչութիւն

Խնդրում ենք մեր ազգականներէն և բարեկամներէն, մեզ հետ յարաբերութեան մտնել հետեւեալ հասցէով. Забайкалская Желѣзн. Дорога, станція Березовка, Аршаку Аршакуни.

Երզնկայի Փրկչայ թաղէն, Խաչատուր Բարսեղ Գամբուրեան,
» Գիւլատիա թաղէն, Խաչատուր Թորոս Թորիկեան,
» » թաղէն, Արամ
» Շէյխ-Զէլէպի » Արշակ Մկրտիչ Գոտիկեան,
» Զառ գիւղէն Աւագ Յովակիմ Սանտիկեան։

«ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՕ»-Ի ԿՈՂՄԻՑ

ՀԵՏԵՒԵԱԼՆԵՐԸ ՄԵԶ ՄՕՏ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՆԵՆ

1. Յակոբ Մահտեսի Աղաջանեան (Մուշ)։
2. Սուքիաս Տինօեան (Սեբաստիա)։
3. Արտաշէս Ներկարարեան։
4. Իլիպակ կամ Հրանդ Սաղաթէլեան (Կոփ)։
5. Նազարէթ Զաքարեան։
6. Ալէքսան Գուասեան (Մուշ)։
7. Արմենակ Մերօեան (Կարին)։
8. Մկրտիչ Քանդոեան։
9. Ղազար Վարդանեան (Մուշ)։
10. Սրբուհի Թօսունեան (Վան)։

Ստանալու պէտք է դիմել. Тифлисъ, Пушкинскій пассажъ. № 25, «Տեղեկատու Բիւրօ»։

Նկատի ունենալով «Բիւրօ»-ի անձուկ միջոցները, խնդրում ենք բոլոր մեզ դիմողներին, որ բարի լինեն 30 կոպէկի նամականիշ (մարկա) դրկել մեզ, որպէսզի հնարաւորութիւն ունենանք ամենքին գոհացում տալ։

220 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ